Funded by the European Union

EU4Dialogue: աջակցություն Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում հակամարտությունների փոխակերպմանը



Իրականացման ժամանակահատված: 03.12.2020 - 02.06.2025

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 9 000 000

Ընդհանուր բյուջե: € 9 100 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNDP

Նախագծի նկարագրություն:

«EU4Dialogue» բազմաբաղադրիչ ծրագրով աջակցություն է տրամադրվում նախաձեռնությունների, որոնք նպաստում են սահմանի երկու կողմում ապրող բնակչության միջև երկխոսության և մարդկանց միջև շփումների ձևավորմանը Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում:
Ծրագրի նպատակն է օգնել հակամարտություններից տուժած բնակչությանը և բարելավել նրանց առօրյա կյանքի որակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնակչության առավել խոցելի խմբերին, այդ թվում տեղահանված անձանց: Այս կերպ ԵՄ-ն ցանկանում է ապահովել, որ ոչ մի խոցելի խումբ չմնա առանց համապատասխան ուշադրության և աջակցության:

«EU4Dialogue: Աջակցություն հակամարտությունների փոխակերպմանը Հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում» ծրագրի նպատակն է ստեղծել կայուն հիմք հակամարտությունների փոխակերպման համար՝ հակամարտություններից տուժած համայնքների սոցիալ-տնտեսական պայմանների և մարդու անվտանգության բարելավման միջոցով:

Ակնկալվող արդյունքներ:

- Փոքր տեղական նախաձեռնությունների համար ենթադրամաշնորհներ տրամադրել՝ աջակցելու սահմանի երկու կողմում գտնվող բնակչության միջև վստահության կառուցմանը միտված միջոցառումների իրականացմանը, որոնք հասանելի կլինեն թե կանանց, թե տղամարդկանց համար:
- Աջակցել կարողությունների զարգացմանը՝ համայնքային մակարդակում գտնվող դերակատարներին հզորացնելու նպատակով:
- Խթանել սահմանի երկու կողմում ապրող բնակչության միջև շփումները:
- Հաստատել և իրականացնել հակամարտությունների փոխակերպման ռազմավարական միջամտություններ համապատասխան աշխատանքների և արտադրամիջոցների հատկացումների միջոցով: